

զուխնի վարկին եւ ոսկի զընծըլով հիւսեցին  
 իրր զչաթանն եւ մէջն ոսկի արծաթ լցին եւ  
 փողոցնին փող հնչեցուցեալ եւ տալանին  
 25 կանչէին թէ ով գայ՝ լաւ հախ, այլ եւ պար-  
 գեւս տամ: Եւ այսպէս ժողովեցան ազգ եւ  
 ազինք բազում յոյժ:

Զայն լուեալ Փափն, եւ նա եւս հրա-  
 մայեաց զորաժողով լինել. եւ իրրեւ ետես  
 30 թէ վէնէտիկուն բազում է եւ առաւել,  
 գրեաց զիր առ թագաւորսն քրիստոնէից եւ  
 առ իշխանս եւ մեծամեծս, այլ եւս Ալամանաց  
 կայսրն, զալ հասանել յօգնութիւն (ընդդէմ)  
 հպարտացեալ զսողին. եւ առ հասարակ ա-  
 35 մենեքեան առաքէին Փափին օգնութիւն, հա-  
 գարք հաղարաց եւ բիւրք բիւրուց: Զոր իմա-  
 ցեալ իշխանն տուքս՝ երկեաւ, զի զիտէր որ  
 չկարէր դէմ կալ հօր թագաւորաց. ապա  
 չարն վատ խորհուրդ արարեալ անաստուածա-  
 40 բար ընդդէմ օրինաց առաքեաց առ խոնթքարն  
 Տաճկաց եւ ասէ թէ Յարեան ի վերայ իմ  
 ամենայն թագաւորք եւ իշխանք եւ չիք ինձ  
 այլ հնար, բայց թէ քակեմ ես զուխտն եւ  
 զգաշինս իմ որ ընդ նոսա, եւ ընդ ձեզ արա-  
 45 բից ուխտ եւ սէր. արդ աղաչեմ զքեզ առա-  
 քեա ինձ այժմ փութով ձ՞ն հոգի. եւ ես մա-  
 չեցից զնոսա ի սուր, եւ զերկիր նոցա ի  
 ձեռս ձեր մատնելով մատնեցից: Իրրեւ զես-